«Էկոլուր» տեղեկատվական ՀԿ

«Նաիրիտ» գործարանի բնապահպանական վերականգնման և ռեգեներացիայի ծրագրի հանրային մշտադիտարկման արդյունքներ

Երևան, 2026թ.

«Էկոլուր» տեղեկատվական ՀԿ-ն ««Նաիրիտ» գործարանի բնապահպանական վերականգնման և ռեգեներացիայի ծրագրի հանրային մշտադիտարկման արդյունքներ» զեկույցը պատրաստել է «Բարձրացնել Համաշխարհային բանկի, Հայաստանի Հանրապետության կառավարության և Երևանի քաղաքապետարանի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը՝ կապված Նաիրիտի տարածքի նպատակային վերափոխման որոշման հետ» ծրագրի շրջանակներում՝ «Global Greengrants» հիմնադրամի աջակցությամբ: Զեկույցում արտահայտված տեսակետերը պարտադիր չէ, որ արտահայտեն «Global Greengrants» հիմնադրամի տեսակետերը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 3

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ «ՆԱԻՐԻՏ» ԳՈՐԾԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ 4

3. «ՆԱԻՐԻՏ» ԳՈՐԾԱՐԱՆԻ ՌԵԿՈՒԼՏԻՎԱՑԻԱՅԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՎԵՐՋԻՆ ՁԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 7

4. «ՆԱԻՐԻՏ» ԳՈՐԾԱՐԱՆԻ ՌԵԿՈՒԼՏԻՎԱՑԻԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀՀ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 8

5. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ 14

6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 16

7. ԱՌԱՁԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 17

Հավելված 1 18

Հավելված 2 20

Հավելված 3 22

Հավելված 4 25

Հավելված 5 29

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՊՀ	Անկախ Պետությունների Համագործակցություն
ՋԷԿ	Ջերմաէլեկտրակայան
ԱՄՆ	Ամերիկայի Միացիալ Նախանգներ
ՄԱԿ	Միացիալ Ազգերի Կազմակերպություն
ՀԲ	Համաշխարհային Բանկ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ՇՄ	Շրջակա միջավայր
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Զեկույցի նպատակն է ներկայացնել «Նաիրիտ» գործարանի շուրջ զարգացումները, օրենսդրական կարգավորումները, ««Նաիրիտ» գործարանի բնապահպանական վերականգնման և ռեգեներացիայի ծրագրի հանրային մշտադիտարկման արդյունքները:

Զեկույցի պատրաստման հիմքում ընկած է հետևյալ մեթոդաբանությունը.

- 2015թ. Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի/Համաշխարհային բանկի «Նաիրիտ գործարանի շահագործման տեխնիկական իրագործելիության և ֆինանսական կենսունակության գնահատում» հաշվետվության վերլուծություն
- պաշտոնական և մեդիա հարթակներում «Նաիրիտ» գործարանի վերաբերյալ առկա տեղեկատվության ուսումնասիրություն
- «Նաիրիտ» գործարանում առկա քիմիական միացությունների և քիմիական ներգործության ենթարկված կառուցվածքների՝ շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա պոտենցիալ ազդեցությունների գիտական գրականության տվյալների ուսումնասիրում
- 2025թ. օգոստոսի 28-ին հաստատված «Հայաստանի Հանրապետության ու Համաշխհային Բանկի Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի միջև «Նաիրիտ» գործարանի բնապահպանական վերականգնման և ռեգեներացիայի ծրագրի նախապատրաստման համար դրամաշնորհի նամակ-համաձայնագրի ուսումնասիրում
- Գործարանի ռեկուլտիվածիան կարգավորող ՀՀ օրենսդրական դաշտի վերլուծություն
- Համաձայնագրի շահառու մարմիններին ուղղված հարցումներ և պատասխաններ, փարձագիտական կարծիքների հավաքագրում:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ «ՆԱԻՐԻՏ» ԳՈՐԾԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Երևանի կարբիդի գործարանի հիմքի վրա 1940թ. հիմնադրվել է Երևանի քիմիական կոմբինատը և արտադրել քլորոպրենային կաուչուկ, իսկ 1976թ. գործարանը վերակազմավորվել է որպես «Նաիրիտ» գիտարտադրական միավորում: Այն իր կազմում ներառել է պոլիմերների գիտահետազոտական ինստիտուտը և ընդլայնել է արտադրանքի տեսականին: «Նաիրիտը» համարվում էր Հայաստանի Հանրապետության գազաքիմիական ճյուղի համակարգաստեղծ համալիրը, որը տիրապետում էր ավելի քան 20 մակնիշի քլորոպրենային կաուչուկների և լատեքսների արտադրության տեխնոլոգիաների՝ ինչպես ացետիլենային (ացետիլենի ստացման համար որպես հումք օգտագործելով բնական գազը), այնպես էլ՝ բութադիենային տեխնոլոգիաների:

Բացի կաուչուկից, արտադրվել է շուրջ 34 տեսակ քիմիական արտադրանք (կարբինոլ, լաք-էթինոլ, կաուստիկ սոդա, նատրիումի հիպոքլորիդ և այլն): 1989թ. գործարանը դադարեցրել է արտադրական գործունեությունը բնապահպանական

նկատառումներից ելնելով և մասամբ վերագործարկվել 1992-199 թթ: Հետագայում, աշխատելով ընդհատումներով, ֆինանսական խնդիրների պատճառով 2016թ. ճանաչվել է սնանկ և դադարեցրել գործունեությունը:

Ըստ Համաշխարհային բանկի 2015թ. գնահատականների[1]՝ «Նաիրիտում»՝ քլորոպրենային կաուչուկի պարտադրությունը ֆինանսապես կենսունակ չէր ո՛չ բութադիենի, ո՛չ էլ ացետիլենի վրա հիմնված արտադրական պրոցեսների կազմակերպման պարագայում: Հաշվետվության հիմնական կորիզը նա էր, որ տեխնոլոգիաներից ոչ մեկի դեպքում ներդրումային ծրագիրը չի ապահովի կատարված ներդրումների վերադարձ 20 տարվա ընթացքում:

Գործարանը չի գործել 2010 թվականից ի վեր, և նրա մասնավոր սեփականատերը լքել է այն: Գործարանի պարտավորությունները գերազանցում են 121 միլիարդ ՀՀ դրամը (250 միլիոն ԱՄՆ դոլար), որի մեջ է մտնում ԱՊՀ Միջպետական բանկի չմարված, պետական երաշխիքով ապահովված վարկը: Այդ ժամանակահատվածում ընկերությունը որևէ եկամուտ չի ստացել և աշխատավարձերի վճարման ու պահպանության ծախսերի կատարման համար ապավինել է Երևանի ՋԷԿ-ի փոխառություններին: Երևանի ՋԷԿ-ի նկատմամբ ընդհանուր պարտքը կազմում է 23 միլիարդ ՀՀ դրամ (48 միլիոն ԱՄՆ դոլար), ներառյալ կրեդիտորական պարտքը մատակարարված գոլորշու դիմաց: Եթե այս վիճակին լուծում չտրվի, ապա «Նաիրիտը» կշարունակի ծանր բեռ մնալ էներգետիկայի ոլորտի պետական կառույցների վրա՝ տարեկան շուրջ 2-3 միլիարդ ՀՀ դրամի չափով (4-6 միլիոն ԱՄՆ դոլար) աշխատավարձերի վճարման և գործարանի պահպանության համար:

Բացի լաք էթինոլից, «Նաիրիտ»-ում պահվում է ավելի քան 150 այլ քիմիական նյութ, որոնք տեղակայված են տարբեր կայանքներում և հաճախ վատ պայմաններում:

Ըստ Համաշխարհային բանկի՝ ավելի քան 14,000 տոննա վտանգավոր քիմիական նյութ է պահվում «Նաիրիտ»-ում վատթարացող պայմաններում:

Քիմիական թունավոր նյութերի արտազատման կամ արտահոսքի հետևանքով մթնոլորտում ստեղծվում է ախտահարող և մահաբեր խտություն: Նրանք կամ հեղուկներ են կամ հեղուկացված գազեր:

Քլոր: Մարդկանց ախտահարման ժամանակ գրգռում է շնչուղիները, առաջացնում է ուժեղ հազ, շնչահեղձություն, հանգեցնում է թոքերի կաթվածի: Քլոր գազի քայքայվող պահեստային տարաներն արտահոսքի և պայթյունների լրացուցիչ ռիսկեր են ստեղծում:

Ամոնիակ: Չոր վիճակում ամոնիակն օդի հետ 4:3 հարաբերությամբ կարող է առաջացնել պայթյուն: Գրգռվածություն զգացվում է 0,1 մգ/լ չափաբաժնի դեպքում, ախտահարող չափաբաժինը 6 ժամ ազդեցության պայմաններում կազմում է 0.21 մգ/լ:

[1] http://www.minenergy.am/storage/files/Nairit_Final_Report_v.3_arm.pdf

Ախտահարումների դեպքում առաջացնում է շնչահեղձություն, հազ, փսխումներ, ջղաձգություն:

Էթինոլ լաք: Դյուրավառ, բազմաթիվ ածխաջրածինների խառնուրդ - միացություն է, որը մի փոքր տեղաշարժելիս կարող է բռնկվել: /«Նաիրիտ» գործարանի նախկին ավագ գիտաշխատող Իշխան Աղաջանյանն ասում է, որ տարեկան 5000 տոննա կաուչուկի արտադրությունից մոտ 700 տոննա էթինոլ լաք էր գոյանում: Գործարանի տարածքում մինչ օրս կուտակված են էթինոլ լաքի վտանգավոր տարաները՝ ավելի քան 1000 տոննա, որոնք նույնիսկ մի փոքր տեղաշարժելիս կարող են բռնկվել և մեծ աղետի պատճառ դառնալ[2]/:

Քացախաթթու: Անգույն հեղուկ՝ սուր հոտով, եռման ջերմաստիճանը՝ ~118°C, ջրում լավ լուծվում է: Գրգռում է աչքերը, մաշկը և շնչուղիները: Բարձր խտության դեպքում առաջացնում է քիմիական այրվածքներ:

Ազոտական թթու: Անգույն կամ դեղնավուն, խիստ կոռոզիոն հեղուկ, սուր հոտով, եռման ջերմաստիճանը՝ ~83°C, առաջացնում է ծանր այրվածքներ մաշկի և աչքերի վրա, շնչելիս կարող է վնասել թոքերը և առաջացնել թոքային այտուց:

Ծծմբական թթու: Անգույն, յուղանման, խիտ հեղուկ, գրեթե անհոտ, եռման ջերմաստիճանը՝ ~337°C: Ուժեղ քայքայիչ է, առաջացնում է խորը քիմիական այրվածքներ, աչքի վնասում մինչև կուրություն: Վնասում է շնչառական համակարգը:

Տոլուոլ: Անգույն, դյուրավառ հեղուկ, բնորոշ արոմատիկ հոտով, եռման ջերմաստիճանը՝ ~111°C: Առաջացնում է գլխապտույտ, գլխացավ, քնկոտություն, կենտրոնական նյարդային համակարգի ճնշում: Երկարատև ազդեցությունը կարող է վնասել լյարդը, երիկամները և նյարդային համակարգը:

Աղաթթու: Անգույն կամ թեթև դեղնավուն հեղուկ՝ սուր խեղդող հոտով: Առաջացնում է մաշկի և աչքերի ծանր այրվածքներ: Գոլորշիները գրգռում են շնչուղիները և կարող են առաջացնել հազ, շնչահեղձություն:

Գործարանում մի քանի հրդեհ և պայթյուն է տեղի ունեցել, որից հետո ՀՀ կառավարությունը ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի (UNEP) հետ համատեղ և ՄԱԿ-ի հումանիտար հարցերի համակարգման գրասենյակի (OCHA) աջակցությամբ ուսումնասիրություն է նախաձեռնել գործարանի տեղամասում դեռևս առկա հիմիական նյութերի չեզոքացման նպատակով: Այնուամենայնիվ, չեզոքացման կամ անվտանգ հեռացման վերաբերյալ վերջնական առաջարկություններ չեն արվել, ներառյալ լաք էթինոլի համար, որը գործարանում առկա ամենադյուրավառ և այրվող նյութն է (և ամենամեծն՝ ըստ ծավալի):

[2]https://hetq.am/hy/article/177955?utm_source=chatgpt.com

Որպես քիմիական աղտոտման աղբյուր՝ «Նաիրիտ» գործարանը չափազանց վտանգավոր է Երևան քաղաքի համար: Այն բնապահպանական աղետների սպառնալիք է:

«Նաիրիտ» գործարանի տարածքը ներկայում զբաղեցնում է 160,0 հա հողատարածք: Ի սկզբանե գործարանը գտնվում էր քաղաքի արտաքին արդյունաբերական գոտում, որը հեռու էր բնակելի տարածքներից, սակայն ժամանակի ընթացքում այն ներառվեց քաղաքային ընդլայնվող սահմաններում:

Հատկանշանական է, որ ՀՀ ՇՄ նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ –ը Երևան քաղաքի, այդ թվում նաև «Նաիրիտ» գործարանի հողային տարածքների աղտոտվածության մոնիթորինգի վերաբերյալ տվյալներ չի հրապարակում[3]:

3. «ՆԱԻՐԻՏ» ԳՈՐԾԱՐԱՆԻ ՌԵԿՈՒԼՏԻՎԱՑԻԱՅԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՎԵՐՋԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունը դիմել է Վերակառուցման և զարգացման միջազգային բանկին (Համաշխարային բանկի կազմի մեջ մտնող ֆինանսական ինստիտուտ) գործարանի տարբեր տեղակայանքներում առկա նյութերի, հողի ու ստորերկրյա ջրերի մաքրման համար դրամաշնորհ տրամադրելու ակնկալիքով: Առաջարկվել է դրամաշնորհի տրամադրում՝ 1,5 մլն ԱՄՆ դոլարի չափով:

Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2025 թվականի հունիսի 27-ին ստորագրվել է «Նաիրիտ» գործարանի բնապահպանական վերականգնման և ռեգեներացիայի ծրագրի նախապատրաստման համար դրամաշնորհի նամակ-համաձայնագիրը:

Գործունեության նպատակն է նպաստել Գործարանից առաջացող հանրային առողջության և շրջակա միջավայրի ռիսկերը լուծելու համար նախատեսված առաջարկվող նախագծի նախապատրաստմանը:

Համաշխարհային բանկը ՀՀ կառավարությանն առաջարկել է իրականացնել բազմափուլ ծրագրային մոտեցում.

- Փուլ 1 - նախապատրաստում, տեղամասի որոշում և քիմիական մաքրում և հեռացում
- Փուլ 2 – իրավական, ֆինանսական և քաղաքային պլանավորում
- Փուլ 3 – գործարանի ապամոնտաժում և քանդում
- Փուլ 4 – հողի և/կամ ստորգետնյա ջրերի վերականգնում:

Մաս Ա. նախագծում և տեխնիկական գնահատում (1. քիմիական նյութերի գույքագրում և բնութագրում, 2. հեռացում, չեզոքացում և մշակման տարբերակներ, 3. կարգավորող և շրջակա միջավայրի համապատասխանություն, 4. տեխնիկական, գործառնական և տնտեսական գնահատում, 5. կիրառման ռազմավարություն և

[3] https://armmonitoring.am/page/29

առաջարկություններ, 6. հողի և ստորգետնյա ջրերի աղտոտվածության բացահայտում)

Մաս Բ. բնապահպանական և սոցիալական ռիսկերի գնահատում (Ծրագրի շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատման նախապատրաստում, Ծրագրի վտանգների և շահագործման պլանի նախապատրաստում, շահագրգիռ կողմերի ներգրավման իրականացում)

Մաս Գ. Կարողությունների զարգացում (Դրամաշնորհ ստացողի, համապատասխան գործակալությունների և գործարանի աշխատակազմի համար վերապատրաստման անցկացում)

Մաս Դ. Հատուկ իրականացման խմբի ստեղծում

Մաս Ե. Բնապահպանական և սոցիալական չափորոշիչներ։

«Տեղամասի առողջության, անվտանգության և բնապահպանական ցուցանիշերն անմիջական ազդեցություն ունեն Երևանում՝ հարևանությամբ ապրող բնակիչների առողջության և կենսապահովման վրա»,- նշված է ՀՀ կառավարության 2025 թվականի հունիսի 26-ի 838-Ա որոշման հիմնավորման մեջ։ Համաձայնագրի Մաս Բ-ով պահանջվող՝ հատուկ իրականացման խմբի ստեղծում գործընթացի շրջանակներում աշխատանքները պետք է իրականացնի ՀՀ կառավարությունը, որի համար ՀՀ փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանին կից ստեղծվելու է գրասենյակ, որի աշխատանքների իրականացմանը պետք է աջակցի Համաշխարհային բանկը։ Ծրագիրն, ըստ Համաշխարհային բանկի, կարժենա 60 միլիոն դոլար։ Դրամաշնորհի ավարտման ժամկետը 2026թ. դեկտեմբերի 31-ն է։

4. «ՆԱԻՐԻՏ» ԳՈՐԾԱՐԱՆԻ ՌԵԿՈՒԼՏԻՎԱՑԻԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀՀ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

«Նաիրիտ» գործարանի հողտարածքի նախատեսվող ռեկուլտիվացիայի իրականացումը պետք է համապատասխանեցնել հետևյալ իրավակարգավորումներին.

1. **Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին**» ՀՀ օրենք[4]

«Նաիրիտ» գործարանի հողատարածքի ռեգեներացիայի նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվությունները և նախագծային փաստաթղթերը ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության Ա) կատեգորիայի ընթացակարգերով՝ համաձայն Օրենքի հոդված 12-ի 3-րդ մասի 6) –րդ կետի՝ «վտանգավոր թափոնների հավաքում, պահում, օգտահանում, մշակում

[4] https://www.irtek.am/views/act.aspx?aid=156771

(բացառությամբ կոշտ կենցաղային, էլեկտրոնային և էլեկտրատեխնիկական սարքավորումների, շինարարական թափոնների տեսակավորման կամ մեխանիկական եղանակով տարանջատման), վերամշակում, վնասազերծում, տեղադրում կամ թաղում»: Նույն ընթացակարգով գործունեությունը ենթակա է շրջակա միջավայրի փորձաքննության նաև որպես քիմիական արդյունաբերության բնագավառի գործունեություն, համաձայն՝ 12-րդ հոդվածի 3-րդ մասի՝(կաուչուկի կամ ռետինատեխնիկական իրերի արտադրություն կամ վերամշակում, անօրգանական թթուների կամ ալկալիների կամ անօրգանական այլ նյութերի կամ միացությունների արտադրություն, գ. օրգանական կամ անօրգանական նյութերի կամ դրանց խառնուրդների արտադրություն կամ վերամշակում):

Հանրային լսումներն իրականացվում են Օրենքի 16,28 և 29 հոդվածներով սահմանվող դրույթներին համապատասխան:

Եզրակացություն

Օրենքի հոդված 7-ից հետևում է, որ «Նաիրիտ» գործարանի ՇՄԱԳ և փորձաքննության գործընթացում պետք է գնահատվեն շրջակա միջավայրի հետևյալ բաղադրիչները՝

- մթնոլորտային օդի որակական ցուցանիշները, մթնոլորտն աղտոտող նյութերը, աղտոտվածության մակարդակը

- մակերևութային և ստորերկրյա ջրերը, դրանց որակի դասը, հոսքի ռեժիմը, որակական և քանակական ցուցանիշները, աղտոտվածության մակարդակը, ջրօգտագործումը, ջրահեռացումը, ջրային համակարգը կամ դրա առանձին մասերը

- հողի նպատակային նշանակությունը, հողատեսքը, գործառնական նշանակությունը, կարգը, որակը, վիճակը, կազմը, աղտոտվածությունը, դեգրադացիան, բերրի շերտի օգտագործումը

- Հողատարածքում առկա բուսական ու կենդանական աշխարհը, դրանց տեսակային կազմը, կենդանական աշխարհի օբյեկտների բնակության միջավայրերը, բուսական աշխարհի օբյեկտների աճելավայրերը, կենդանի վերափոխված օրգանիզմների գործածությունը, ինվազիվ՝ օտարածին, բուսական և կենդանական տեսակների, Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում կամ Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում գրանցված կենդանիների կամ բույսերի առկայությունը

- Քանդման ենթակա ենթակառուցվածքները

- Վերամշակման ենթակա թափոնի կազմը, թափոնի դասը, գործածությունը, վտանգավոր հատկությունները, վտանգավորության աստիճանը, թափոնի քանակը, ծագումը (ըստ տեխնոլոգիական կանոնակարգի)

- ֆիզիկական ազդեցությունները՝ աղմուկը, թրթռումները (վիբրացիան), իոնացնող և ոչ իոնացնող ճառագայթումները

- կլիմայի փոփոխության վրա ազդեցություն ունեցող գործոնների առկայությունը, կլիմայի փոփոխության մեղմմանն ու հարմարվողականությանն ուղղված միջոցառումները

- ազդեցությունների հետ կապված առողջապահական գործոնները

- սոցիալական գործոնները, ժողովրդագրական կազմն ու բնակչությունը

-արտակարգ իրավիճակների, պատահարների, վտանգավոր տարերային երևույթների առաջացման հավանականությունը:

2. **«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք**[5]

Օրենքի հոդված 5-ի 1-ին մասի 1- ին կետին համապատասխան ՀՀ կառավարությունը պետք է հաստատի գործարանի հողատարածքի ռեկուլտիվացիայի ծրագիրը մթնոլորտային օդի պահպանության բաղադրիչով՝

- Օդի որակի մոնիթորինգի, գնահատման և կառավարման նպատակով Օրենքի հոդված 5-ի 15-րդ կետին համապատասխան Նաիրիտ գործարանը որպես Երևան քաղաքը ագլոմերացիայիոն տարր, ենթակա է հնարավոր աղտոտող նյութերի՝ կախված մասնիկների (PM 2.5, PM 10) ազոտի երկօքսիդի (NO 2), ծծմբի երկօքսիդի (SO 2), ածխածնի մոնօքսիդի (CO) գետնամերձ օզոնի (O 3), փոշու մեջ ծանր մետաղների ու ցնդող օրգանական միացությունների (բենզոլ, բենզապիրեն, նիկել (Ni), կադմիում (Cd), արսեն (As), կապար (Pb) և ամոնիակ (NH 3)) դիտակայան կետերի տեղադրման:

- Հոդված 6-ի 1-ին մասի 12-րդ կետին համապատասխան ՇՄ՝ նախարարությունը պետք է կազմակերպի ռեկուլտիվացիոն տարածքի մթնոլորտային օդի պետական մոնիթորինգ և իրականացնի այն:

- Հոդված 7-ի 1-ին մասի 4-րդ կետին համպատասխան՝ Տարածքային կառավարման մարմինը (Երևանի քաղաքապետարանը) պարտավոր է օդերևութաբանական անբարենպաստ պայմանների դեպքում վերացնել մարդու առողջությանն ու շրջակա միջավայրին ուղղված սպառնալիքները:

- Հոդված 9-ով սահմանված կարգով ռեկուլտիվացնող իրավաբանական կամ ֆիզիկական անձը պարտավոր է կանգնել պետական հաշվառման, մշակել աղտոտող/վնասակար նյութերի արտանետումների նախագիծ և դրան համապատասխան ՇՄՆ-ից ստանալ արտանետումների թույլտվություն:

- Հոդված 11-ի 2-րդ մասի համաձայն՝ տարածքի շենքերի և շինությունների վերակառուցման, քանդման, աշխատանքների ընթացքում շինարարական աշխատանքներում ներգրավված կազմակերպությունները կամ ֆիզիկական անձինք

[5] https://www.arlis.am/hy/acts/187759/latest

պարտավոր են պահպանել նույն հոդվածի 2-րդ մասի 1-7 կետերով սահմանվող սահմանափակումները:

3. **ՀՀ «Ջրային օրենսգիրք**[6]

Քանի որ Համաշխարհային բանկի առաջարկի 4-րդ փուլով նախատեսվում է «Նաիրիտի» հողի և/կամ ստորգետնյա ջրերի վերականգնում, ապա Օրենսգիրքը դիտարկվում է այդ տեսանկյունից:

- Հոդված 4-ով ամրագրվում է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում առկա ջրային ռեսուրսները պետության բացառիկ սեփականություն են ու տնօրինվում, տիրապետվում և օգտագործվում են օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այս դեպքում որպես վերականգնման ծրագրի խնդիր կիրառելի է օրենսգրքի 7-րդ հոդվածով ձևակերպված՝

«9) ստորերկրյա ջրային մարմինների համար «լավ» կարգավիճակի և խիստ փոփոխված ջրային մարմինների համար՝ պոտենցիալ «լավ» կամ «միջակ» կարգավիճակի ապահովման» դրույթը: Մասնավորապես, օրենսգրքով սահմանվող ստորերկրյա ջրերի սահմանային մեծությունների չգերազանցումներ և որակի նորմերի պահպանություն (ՀՀ կառավարության 2024 թվականի նոյեմբերի 15-ի «Ստորերկրյա ջրային մարմինների որակի նորմերը սահմանելու մասին» N 1782-ն որոշում[7]), ջրերի հետագա աղտոտման կանխարգելման նպատակով պահպանության համակարգերով ապահովում, ստորերկրյա ջրերի արտահոսքի կորուստների կրճատում, ըստ անհրաժեշտության հողատարածքում հորատանցքերի կառուցման կամ լուծարման հիմնավորում (հոդված 32), ստորերկրյա ջրերի օգտագործման պայմանների ապահովում (հոդված 37.1):

4. **ՀՀ «Հողային օրենսգիրք»**[8]

Հաշվի առնելով այն, որ 2016-ի դեկտեմբերի 1-ի դատարանի վճռով «Նաիրիտ» գործարանն ունի սնանկության կարգավիճակ, և որ դրա գույքային իրավունքները (կամ առնվազն մի մասը) գտնվում են ՀՀ կառավարության վերահսկողության տակ, ըստ ամենայնի, գործարանի հողատարածքների վրա տարածվում են ՀՀ հողային օրենսգրքով սահմանվող կարգավորումները «պետական սեփականության հողերի» վերաբերյալ:

Օրենսգիրքը, ի թիվս այլ կարգավորումների, ներառում է նաև պետական սեփականության հողերի կառավարումը և տնօրինումը, պետությանը սեփականության իրավունքով պատկանող հողերի օտարման, օգտագործման

[6] https://www.arlis.am/hy/acts/39/latest
[7] https://www.arlis.am/hy/acts/199768
[8] https://www.arlis.am/hy/acts/39/latest

իրավունքով տրամադրելու կարգերի, ինչպես նաև թույլատրելի օգտագործման սահմանումը և փոփոխումը.

ա. Օրենսգրքի հոդված 38-ով ամրագրված է, որ ՀՀ կառավարությունը սահմանում է.

- տեխնածին, համաճարակային և այլ վնասակար երևույթների հետևանքով ախտահարման ենթարկված հողերի օգտագործման, պահպանական գոտիները

- այդ հողերում բնակելի տների, արտադրական և սոցիալ-մշակութային օբյեկտների պահպանման, դրանցում մելիորատիվ ու մշակութատեխնիկական աշխատանքների իրականացման կարգը՝ ճառագայթման, քիմիական և այլ վնասակար ներգործության սահմանային թույլատրելի նորմատիվների հաշվառմամբ:

բ. Օրենսգրքի հոդված 56-ի 1-ին մասով սահմանվում է, որ համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականության հողերը սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո՝ չորս տարվա ընթացքում, կառավարության որոշմամբ առանձնացվում և հողամասի հատակագծի հիման վրա անհատույց սեփականության իրավունքով փոխանցվում են համայնքներին:

գ. Օրենսգրքի հոդված 60-ի 8-րդ կետով արգելվում է քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով փոխանցել պետական և համայնքային սեփականություն հանդիսացող այն հողամասերը, որոնք ենթարկված են ռադիոակտիվ և քիմիական աղտոտման, կենսածին վարակման:

Միաժամանակ, նույն հոդվածով ամրագրված է, որ հոդվածով նախատեսված սահմանափակումները չեն տարածվում պետական սեփականություն հանդիսացող հողամասերը համայնքներին փոխանցելու դեպքերի վրա:

դ. Օրենսգրքի 92-րդ հոդվածով սահմանվում է, որ իրավաբանական անձի սնանկացման, կամ լուծարման դեպքերում ծագող հողային հարաբերությունները սահմանվում և կարգավորվում են ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով և այլ օրենքներով:

«Նաիրիտ» գործարանի հողատարածքի սեփականության հարցի անորոշության դեպքում այն Համաձայնագրով նախատեսվում է հանձնել Երևանի քաղաքապետարանին:

5. **«Թափոնների մասին« ՀՀ օրենք**[9]

Օրենքը հոդված 4-ով վտանգավոր թափոններ են սահմանում այն թափոնները, որոնք իրենց ֆիզիկական, քիմիական կամ կենսաբանական հատկություններով վտանգ են ստեղծում կամ կարող են ստեղծել մարդու առողջության և շրջակա միջավայրի համար, և պահանջվում են դրանց հետ վարվելու հատուկ մեթոդներ, եղանակներ, միջոցներ:

[9] https://www.arlis.am/hy/acts/170574/latest

Նույն հոդվածի համաձայն.

- թափոնների վնասազերծումը թափոնների վտանգավոր հատկությունների նվազեցումը կամ վերացումն է մեխանիկական, ֆիզիկաքիմիական կամ կենսաբանական մշակման միջոցով

- թափոնների տեղադրումը թափոնների մեկուսացումն է, որը բացառում է թափոնների հետագա օգտագործումը և ուղղված է դրանց չեզոքացմանն ու շրջակա միջավայրում վտանգավոր նյութերի հետագա տարածման կանխարգելմանը

- թափոնների թաղումը թափոնների վերջնական տեղադրումն է հատուկ առանձնացված տեղերում կամ օբյեկտներում, որը բացառում է դրանց վտանգավոր ներգործությունը մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա:

Օրենքի 7-րդ հոդվածի ե) կետի համաձայն՝ ՀՀ կառավարությունը պետք է սահմանի.

ե) վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը (այն հաստատվել է ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» որոշմամբ[10] և զ) վտանգավոր և արգելված թափոնների ցանկերը (վտանգավոր և արգելված թափոնների ցանկերը հաստատվել է ՀՀ բնապահպանության նախարարի հրամանով[11]):
«Թափոնների» մասին ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի ե) կետի համաձայն՝ «Նաիրիտ» գործարանի ենթակառուցվածքների և հողատարածքների ռեկուլտիվացիայի համար անհրաժեշտ է ստանալ վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզիա ՀՀ կառավարության սահմանված կարգով:

ՀՀ ՇՄ նախարարության կողմից 06.12.2021թ-ին «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ում առկա վտանգավոր թափոնների և քիմիական նյութերի վերամշակման, փոխադրման, վնասազերծման լիցենզիա է տվել «Էկո-Գրուպ Ինտերնեյշնլ» ՍՊԸ-ին[12]: Լիցենզիան տրվել է ՀՀ ՇՄ նախարարի 2019թ. մայիսի 10-ի «Բնապահպանական նորմեր և կանոններ սահմանող նորմատիվ իրավական ակտերի ցանկը հաստատելու մասին» 121-Լ հրամանի[13] հիմքով, սակայն ցանկը զուտ 37 իրավական ակտերի թվարկում է, որը չի տալիս պարզ պատկերացում լիցենզիա ստացած կազմակերպության ստանձնած պարտավորությունների, վտանգավոր նյութերի անվանումների, համապատասխան ծավալների և այլ նույնականացնող բաղադրիչների մասին: Ընկերությունն ունի նաև «Նաիրիտ» գործարանում առկա 34 անուն վտանգավոր քիմիական միացությունների, բացառությամբ 1 223 027,0 կգ լաք էթինոլի, ջերմային վնասազերծման կայանքի շահագործման ԲՓ-0031-21 ՇՄԱԳ դրական

[10] https://www.irtek.am/views/act.aspx?tid=132121&sc=p96#p96
[11] https://www.arlis.am/hy/acts/140112
[12] http://env.am/storage/files/waste-licence-2024.pdf
[13] http://env.am/storage/files/hraman121-l.pdf

եզրակացությունը՝ ստացած 12.02.2021թ[14]: Գործունեությունը նախատեսված է «Նաիրիտ գործարան» ՓԲԸ արտադրական տարածքում՝ 830 մ² մակերեսով նախկին պոմպակայնի շենքում:

6. ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի «Քիմիական նյութերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հայեցակարգը հաստատելու մասին« N 1265-Լ որոշում[15]: Որոշման նպատակը մարդու առողջության և շրջակա միջավայրի պահպանության տեսանկյունից քիմիական նյութերի անվտանգ գործածության ապահովումն է: Հայեցակարգը, սակայն չի տարածվում այն քիմիական նյութերի վրա, որոնք կորցրել են սկզբնական սպառողական հատկությունները և վեր են ածվել թափոնների: Վերջիններս կարգավորվում են թափոնների ոլորտը կանոնակարգող օրենսդրությամբ: Ըստ Հայեցակարգի՝ օրենքը պետք է ընդունվեր դեռևս 2018 թվականին: «Քիմիական նյութերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝

ա. կստեղծվի և կսկսի գործել քիմիական նյութերի գրանցման միասնական համակարգը

բ. կսահմանվի քիմիական նյութերի դասակարգման պահանջը

գ. կսահմանվի քիմիական նյութերի մակնշման պահանջը, որով կապահովվի քիմիական նյութերի վտանգավոր հատկությունների վերաբերյալ վերջնական սպառողին իրազեկելու արդյունավետ համակարգը

դ. համապարփակ կկարգավորվի քիմիական նյութերի ներմուծման և արտահանման համակարգը,

ե. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխություններին համահունչ օրենքով կսահմանվեն պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները, պարտականությունները, քիմիական նյութերի գործածության մեջ ներգրավված անձանց իրավունքները և պարտականությունները: Օրենքի նախագիծը մշակվել է և այժմ հրապարակված է իրավական ակտերի նախագծերի միասնական կայքում:

5. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

1. ՀԲ-ի ծրագրի հանրային մոնիթորինգի շրջանակներում «Էկոլուր» ՀԿ-ի թիմը մասնակցել է 2025թ. սեպտեմբերին Համաշխարհային բանկի երևանյան գրասենյակում կազմակերպված հանդիպմանը, որին մասնակցում էին ՀԲ-ի փորձագետներ ու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ: Հանդիպման ընթացքում ՀԲ-ի ներկայացուցիչները ներկայացրին նախատեսվող ծրագիրը, պատասխանեցին քաղհասարակության հարցերին: Փորձագետները նշեցին, որ պետք է իրականացվեն

[14] file:///C:/Users/User/Downloads/31%20(2).pdf
[15] https://www.arlis.am/hy/acts/126543/latest

ուսումնասիրություններ՝ պարզելու տարածքի աղտոտվածության մակարդակը, մշակելու գործողություններ։ Նշվեց, որ քննարկվում են տարբեր սցենարներ ապամոնտաժված սարքավորումների չեզոքացման ուղղությամբ, այդ թվում երկրից դուրս բերման։ Նշվեց.

- Հարկավոր է մշակել առաջարկություններ «Նաիրիտ»-ի տարածքում առաջացած թափոնների և մնացորդների անվտանգ հեռացման կամ պահպանման համար՝ ընտրելով համապատասխան վայր կամ օբյեկտ։ Պետք է մշակել միասնական ռազմավարություն՝ քիմիական նյութերի հեռացման և կայունացման համար՝ ներառելով տեխնիկական բնութագրերը և կապալառուների որակավորման չափանիշները։
- Անհրաժեշտ է ստեղծել արտակարգ իրավիճակների արձագանքման պլաններ՝ արտահոսքերի կամ չնախատեսված քիմիական ռեակցիաների դեպքում արագ և արդյունավետ գործողությունների համար և այլ գործողություններ։
- Աշխատանքները պետք է իրականացնի ՀՀ կառավարությունը, որի համար ՀՀ փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանին կից գրասենյակ է ստեղծվելու, իսկ Համաշխարհային բանկն աջակցելու է աշխատանքների իրականացմանը։

Որպես հաջողված փորձ նշվեց Մոսկվայում կառուցված «Садовые кварталы» բնակելի համալիրը։ Այն կառուցվել է «Կաուչուկ» գործարանի տարածքում, որը նախապես մաքրվել է թունավոր նյութերից։

Ըստ բանախոսների՝ «Նաիրիտ» գործարանի ամենավտանգավոր արտադրամասը քլորոռպրենային կաուչուկի արտադրամասն է, որտեղ հիմնական արտադրանքի 10-15%-ի չափով առաջանում էր թափոնային նյութ՝ էթինոլ լաք, որը դյուրավառ, բազմաթիվ ածխաջրածինների խառնուրդ է, ներսում ընթանում են քիմիական ռեակցիաներ։ Այդ ռեակցիաները դանդաղեցնելու նպատակով հատուկ քիմիական նյութեր են ավելացնում։ Հակառակ դեպքում նյութն սկսում է պնդանալ և դառնում պայթյունավտանգ։

2. 2025 թ. «Էկոլուր» ՀԿ-ն նամակով դիմել է Համաշխարհային բանկի Հայաստանի գրասենյակի տնօրենին՝ խնդրելով տրամադրել «Նաիրիտ» գործարանի բնապահպանական վերականգնման և ռեգեներացիայի ծրագրի ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն։ Նամակին ի պատասխան Բանկի ներկայացուցչությունից ստացվել է պատասխան այն մասին, որ 2026թ. մարտի 31-ի դրությամբ դրամաշնորհներով ֆինանսավորվող միջոցառումները դեռ չեն սկսվել։ Ըստ ՀԲ-ի բանավոր հաղորդակցության՝ 2026թ. հունիսի դրությամբ նախնական աշխատանքները սկված են։

3. Հաշվի առնելով այն, որ համաձայն Համաձայնագրի մաս Բ-ի պահանջի, աշխատանքների համակարգման համար նախատեսվում է ՀՀ փոխվարչապետին կից գրասենյակի ստեղծում, «Էկոլուրը» նամակ է ուղղել ՀՀ փոխվաչապետ Տիգրան Խաչատրյանին գրասենյակի ստեղծման, աշխատակիցների ընտրության, Համաձայնագրի կատարման փուլի և, մասնավորապես, «Նաիրիտ» գործարանի

ապամոնտաժումից և քիմիական վտանգավոր նյութերից հողի ու ստորերկրյա ջրերի մաքրումից հետո տարածքի նպատակային օգտագործման թիրախների ընտրության ու գործարանի ենթակառուցվածքների ապամոնտաժումից առաջացած և քիմական ներգործության ենթարկված մետաղական թափոնների վնասազերծման կամ օգտահանման խնդրի լուծման տեսլականի վերաբերյալ: Մեր հարցմանը չի պատասխանվել:

4. ՀՀ ՇՄ նախարարությանն «Էկոլուր» ՀԿ-ի հարցումը վերաբերում էր թափոնների վերամշակման լիցենզիա ունեցող և ՇՄԱԳ դրական եզրաացություն ստացած «Էկո-Գրուպ Ինթերնեշնլ» ՍՊԸ-ին և նրա գործունեությանը, կազմակերպության թափոնների հեռացման ծառայությունների մատուցման իրավակարգավորումներին, նախատեսվող վնասազերծման աշխատանքների մակարդակին և Համաձայնագրում կազմակերպության նախատեսվող ներգրավմանը կամ դերակատարմանը:

Ի պատասխան թիվ № 5/26.18/14061 նամակով ՇՄ նախարարությունից հայտնել են, որ նախարարության կողմից 2021թ. դեկտեմբերի 12-ին Ընկերությանը տրամադրված № 0017-21 վտանգավոր թափոնների գործածության գործունեության անժամկետ լիցենզիան գործող է, քանի որ առկա չեն «Լիցենզավորման մասին» օրենքով սահմանված լիցենզիայի կասեցման կամ դադարեցման հիմքեր:
Ընկերություն կողմից «Նաիրիտ» գործարանի տարածքում որևէ գործունեություն ներկայումս չի իրականացվում: Շրջակա միջավայրի նախարարության կողմից 2021 թվականի փետրվարի 12-ին ԲՓ 0031-21 պետական փորձաքննական դրական եզրակացությունը օրենքի ուժով չի գործում: Միաժամանակ նախարարությունը հայտնել է, որ թափոնների այրման ծառայությունների մատուցման քաղաքացիաիրավական փաստաթղթի և վերջինս ստորագրող կողմերի վերաբերյալ նախարարությունում տեղեկատվություն առկա չէ:

5. «Նաիրիտ» ՓԲԸ-ի սնանկության գործերով կառավարիչի՝ 2025թ. դեկտեմբերի 11-ին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքիների նախարարի տեղակալին ուղղված՝ «Էկոլուր» ՀԿ-ի 2025թ. դեկտեմբերի 9-ի հարցման շրջանակներում միջնորդավորված պատասխանում (15.12.25թ. ՈԱՍ//43112-2025 նամակ) նշվում է, որ ՀԲ-ի ներկայացուցիչը 2025թ. հոկտեմբերի 3-ին այցելել է գործարան, տեղեկացրել Համաձայնագրի նպատակների, դրա համար պահանջվող 1,5 միլիոն դոլար գումարի, գործարանի տարածքում առկա քիմիական նյութերի, հողի նմուշառման 14 ամիս տևողությամբ մանրամասն ուսումնաիրությաունների մասին: Նամակում նշվում է, որ այլ տեղեկատվության չի տիրապետում:

6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. «Էկոլուր»-ի և շահագրգիռ կողմերի միջև նամակագրության համաձայն՝ ՀԲ-ի ծրագրի ժամկետները ուշացել են մեկ տարով:

2. Հստակեցված չեն «Նաիրիտ»-ի տարածքում առաջացած թափոնների և մնացորդների անվտանգ հեռացման կամ պահպանման վայրերը:

3. Հստակեցված չեն գործարանի տարածքի հետագա օգտագործման նպատակները, կազմված չեն տարածքների ռեգեներացիայի տեխնիկական առաջադրանքները, որը թույլ կտար հայտարարել կապալառու կազմակերպությունների մրցույթ:

3. «Նաիրիտ» գործարանում առկա 34 անուն վտանգավոր թափոնների այրման միջոցով չեզոքացնելու գործընթացը «Էկո-Գրուպ Ինթերնեշնլ» ՍՊԸ-ն, որն ուներ համապատասխան լիցենզիա, չի կատարել:

4. Ջրի և հողի մաքրման աստիճանի նվազագույն ցուցանիշները չեն սահմանվել, ինչը անորոշություն է մտցնում կատարված աշխատանքի մոնիթորինգի, արդյունքների գնահատման և համապատասխան ցուցանիշների օգտագործման տիրույթում:

7. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվի առնելով այն, որ «Նաիրիտ»-ը եզակի գիտաարտադրական միավորում էր՝ «Նաիրիտ» ԳԱՄ, որի կազմում էին քիմիական գործարանը, փորձնական գործարանը և համամիութենական գիտահետազոտական ինստիտուտը (ВНИИПОЛИМЕР): Այն մոտեցումը, ըստ որի տարածքը պարզապես պետք է ազատվի քիմիական նյութերից և տրամադրվի Երևանի քաղաքապետարանին կառուցապատման նպատակով, միակողմանի է և թույլ չի տալիս նպատակային օգտագործել առկա ռեսուրսները: Սակայն, ինչպես երևում է Համաշխարհային բանկի/Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի հետ ստորագրված համաձայնագրից, «Նաիրիտ»-ը դիտարկվում է որպես միայն աղտոտված տարածք:

Կարևոր է դիտարկել «Նաիրիտ»-ը՝ որպես արդյունաբերական համալիր, որը հնարավոր է ձևափոխել և դարձնել տեխնոպարկ՝ ժամանակակից լավագույն տեխնոլոգիաների ընդգրկմամբ: Տեխնոպարկն իրենից կներկայացնի այնպիսի արդյունաբերական գոտի, որը կխթանի գիտատեխնիկական ներուժի ամրապնդումն ու զարգացումը, ինչը կնպաստի Հայաստանի բարձր տեխնոլոգիական արդյունաբերության զարգացմանը:

Անհրաժեշտ է ազատվել վտանգավոր թափոններից, միաժամանակ վերամշակել արժեքավոր թափոնները:

Անհրաժեշտ է պահպանել և արդիականացնել առկա ենթակառուցվածքները՝ էներգամատակարարման, ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգերը, տրանսպորտային ուղիները:

"Ecolur" Informational NGO Address: 49/2 Hanrapetutyan, Yerevan, Armenia E-mail: ecolurpressclub@gmail.com Web site: www.ecolur.org Tel. (37491) 92 12 64 mob.	ECOLUR NEW INFORMATIONAL POLICY IN ECOLOGY	«Էկոլուր» տեղեկատվական ՀԿ Հասցե՝ Հանրապետության 49/2, Երևան, Հայաստան Էլ. հասցե՝ ecolurpressclub@gmail.com Էլ. կայք՝ www.ecolur.org Բջջ.՝ (+37491) 92 12 64

ՀՀ փոխվարչապետ պարոն Տիգրան Խաչատրյանին
«Էկոլուր» տեղեկատվական ՀԿ-ի
նախագահ Ինգա Զարաֆյանից

Հարցում

Հարգելի պարոն փոխվարչապետ, ինչպես Ձեզ հայտնի է, ՀՀ կառավարությունը 2025 թվականի օգոստոսի 28-ին հաստատել է «Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի միջև «Նաիրիտ» գործարանի բնապահպանական վերականգնման և ռեգեներացիայի ծրագրի նախապատրաստման համար դրամաշնորհի նամակ-համաձայնագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրի նախագծի մասին» N 1200-Ա որոշումը, որով նախատեսվում է ապամոնտաժել գործարանը և հողը մաքրել քիմիական նյութերից: Սույն համաձայնագրին ՀՀ նախագահը հավանություն է տվել 2025թ. սեպտեմբերի 1-ի ՆՀ-217 հրամանագրով:

Համաձայնագրի մաս Բ-ով պահանջվող՝ հատուկ իրականացման խմբի ստեղծում գործընթացի շրջանակներում աշխատանքները պետք է իրականացնի ՀՀ կառավարությունը, որի համար ՀՀ փոխվարչապետին կից ստեղծվել է գրասենյակ, որի աշխատանքների իրականացմանը պետք է աջակցի նաև Համաշխարհային բանկը:

«Էկոլուր» տեղեկատվական ՀԿ-ն իրականացնում է «Բարձրացնել Համաշխարհային բանկի, Հայաստանի Հանրապետության կառավարության և Երևանի քաղաքապետարանի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը՝ կապված Նաիրիտի տարածքի նպատակային վերափոխման որոշման հետ» ծրագիրը, որի հիմնական նպատակը «Նաիրիտ» գործարանի բնապահպանական վերականգնման և ռեգեներացիայի ծրագրի վերբերյալ հասարակության մեջ այդ գործընթացի իրազեկվածության և թափանցիկության բարձրացման ապահովումն է:

2025 թվականի սեպտեմբերին Համաշխարհային բանկի երևանյան գրասենյակի հրավերով տեղի է ունեցել հանդիպում բանկի փորձագետների ու

քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միջև: Այդ հանդիպմանը հրավիրված էր և մասնակցում էր նաև «Էկոլուր» տեղեկատվական ՀԿ-ն: Քննարկման ժամանակ բարձրացված որոշ հարցերի պատասխաններ օբյեկտիվ պատճառներով, մնացին անորոշ և ոչ-հստակ:

Ելնելով վերոգրյալից և առաջնորդվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով՝ խնդրում ենք տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին.

1. Ստեղծվե՞լ է արդյոք այդ գրասենյակը և ե՞րբ:
2. Ի՞նչ նեղ մասնագիտական կրթություն ունեն գրասենյակի աշխատակազմը և ի՞նչ սկզբունքով է կատարվել նրանց ընտրությունը:
3. Որքա՞ն է գրասենյակի լիազորությունների ժամկետը:
4. Մինչ այժմ ի՞նչ աշխատանքներ է իրականացրել գրասենյակը:
5. Նախատեսվու՞մ է գրասենյակի աշխատակազմի և քաղհասարակության ներկայացուցիչների հետ հանդիպում:
6. Ո՞ր փուլում է գտնվում Համաձայնագրի կատարումը:
7. Ճշգրտվա՞ծ են արդյոք «Նաիրիտ» գործարանի ապամոնտաժումից և քիմիական վտանգավոր նյութերից հողի ու ստորերկրյա ջրերի մաքրումից հետո տարածքի նպատակային օգտագործման թիրախները:
8. Ո՞րն է գործարանի ենթակառուցվածքների ապամոնտաժումից առաջացած և քիմիական ներգործության ենթարկված մետաղական թափոնների վնասազերծման կամ օգտահանման խնդրի լուծման տեսլականը:
9. ՀՀ կառավարության կողմից նախատեսվո՞ւմ է արդյոք այս գործընթացի իրականացման հայեցակարգի և գործողությունների պլանի ընդունում:

Հարգանքով՝

Ինգա Զարաֆյան՝

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի նախագահ,

կենսաբանական գիտությունների թեկնածու

07.11.2025թ.

"Ecolur" Informational NGO Address: 49/2 Hanrapetutyan, Yerevan, Armenia E-mail: ecolurpressclub@gmail.com Web site: www.ecolur.org Tel. (37491) 92 12 64 mob.	ECOLUR NEW INFORMATIONAL POLICY IN ECOLOGY	«Էկոլուր» տեղեկատվական ՀԿ Հասցե՝ Հանրապետության 49/2, Երևան, Հայաստան Էլ. հասցե՝ ecolurpressclub@gmail.com Էլ. կայք՝ www.ecolur.org Բջջ.՝ (+37491) 92 12 64

Համաշխարհային բանկի Հայաստանի գրասենյակի տնօրեն

պարոն Ֆաբրիցիո Զարկոնեին

Հարցում

Հարգելի պարոն Զարկոնե,

«Էկոլուր» տեղեկատվական ՀԿ-ն 2024 և 2025 թվականներին Համաշխարհային բանկի Հայաստանի գրասենյակի հրավերով մասնակցել է «Նաիրիտ» գործարանի շրջակա միջավայրի վերականգնման ծրագրի վերաբերյալ քննարկումներին։ «Էկոլուր»-ը շահագրգռված է մշտադիտարկել Նաիրիտ» գործարանի բնապահպանական վերականգնման և ռեգեներացիայի ծրագրի ծրագրի ընթացքը և խնդրում է տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին.

- Հայաստանի Հանրապետությանը տրամադրած դրամաշնորհի շրջանակներում նախատեսվող նախագծման և տեխնիկական գնահատման աշխատանքներն (Քիմիական նյութերի գույքագրում և բնութագրում, հեռացում, չեզոքացում և մշակման տարբերակներ, կարգավորող և շրջակա միջավայրի համապատասխանություն, տեխնիկական, գործառնական և տնտեսական գնահատում, կիրառման ռազմավարություն և առաջարկություններ, հողի և ստորգետնյա ջրերի աղտոտվածության բացահայտում) ի՞նչ փուլում են:
- Կատարվե՞լ է բնապահպանական և սոցիալական ռիսկերի գնահատում (Ծրագրի շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատման նախապատրաստում, Ծրագրի վտանգների և շահագործման պլանի

նախապատրաստում, Շահագրգիռ կողմերի ներգրավման իրականացում) և եթե այո, ապա ի՞նչ արդյունքներ են գրանցվել։

- Կարողությունների զարգացման (Դրամաշնորհ ստացողի, Համապատասխան գործակալությունների և Գործարանի աշխատակազմի համար վերապատրաստման անցկացում) վերաբերյալ ի՞նչ միջոցառումներ են իրականացվել։
- Ստեղծվե՞լ է արդյոք հատուկ իրականացման խումբը։
- Ի՞նչ բնապահպանական և սոցիալական չափորոշիչներ են ընդունվել։

Հարգանքով՝

Ինգա Զարաֆյան՝

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի նախագահ,

կենսաբանական գիտությունների թեկնածու

08.06.2026թ.

"Ecolur" Informational NGO Address: 49/2 Hanrapetutyan, Yerevan, Armenia E-mail: ecolurpressclub@gmail.com Web site: www.ecolur.org Tel. (37491) 92 12 64 mob.	ECOLUR NEW INFORMATIONAL POLICY IN ECOLOGY	«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ Հասցե՝ Հանրապետության 49/2, Երևան, Հայաստան Էլ. հասցե՝ ecolurpressclub@gmail.com Էլ. կայք՝ www.ecolur.org Բջջ.՝ (+37491) 92 12 64

ՀՀ շրջակա միջավայրի նախարար
պարոն Համբարձում Մաթևոսյանին

Հարցում

Հարգելի պարոն նախարար,
ՀՀ կառավարությունը 2025 թվականի օգոստոսի 28-ին հաստատել է «Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի միջև «Նաիրիտ» գործարանի բնապահպանական վերականգնման և ռեգեներացիայի ծրագրի նախապատրաստման համար դրամաշնորհի նամակ-համաձայնագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրի նախագծի մասին» N 1200-Ա որոշումը, որով նախատեսվում է ապամոնտաժել գործարանը և հողը մաքրել քիմիական նյութերից: Սույն համաձայնագրին ՀՀ նախագահը հավանություն է տվել 2025թ. սեպտեմբերի 1-ի ՆՀ-217 հրամանագրով:

«Էկոլուր» տեղեկատվական ՀԿ-ն իրականացնում է «Բարձրացնել Համաշխարհային բանկի, Հայաստանի Հանրապետության կառավարության և Երևանի քաղաքապետարանի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը՝ կապված Նաիրիտի տարածքի նպատակային վերափոխման որոշման հետ» ծրագիրը, որի հիմնական նպատակը «Նաիրիտ» գործարանի բնապահպանական վերականգնման և ռեգեներացիայի ծրագրի վերբերյալ հասարակության մեջ այդ գործընթացի իրազեկվածության և թափանցիկության բարձրացման ապահովումն է:

2025 թվականի սեպտեմբերին Համաշխարհային բանկի երևանյան գրասենյակի հրավերով տեղի է ունեցել հանդիպում բանկի փորձագետների ու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միջև: Այդ հանդիպմանը հրավիրված էր և մասնակցում էր նաև «Էկոլուր» տեղեկատվական ՀԿ-ն: Քննարկման ժամանակ բարձրացված որոշ հարցերի պատասխաններ օբյեկտիվ պատճառներով, մնացին անորոշ և ոչ-հստակ:

Հայտնի է նաև, որ 2021 թվականի փետրվարի 12-ին «Էկո-Գրուպ Ինթերնեշնլ» ՍՊԸ-ն ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունից ստացել է ՇՄԱԳ-ի դրական եզրակացություն (ԲՓ-0031-21)՝ «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ին պատկանող 33 տեսակի վտանգավոր քիմիական թափոնների (բացառությամբ 1,223,027.0 կգ

էթինոլ սպիրտի) այրման համար: Աշխատանքները նախատեսվում էր իրականացնել «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ի արտադրական հրապարակում՝ 830 քմ² մակերեսով նախկին պոմպակայանի շենքում:

Ելնելով վերոգրյալից և առաջնորդվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով՝ խնդրում ենք տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին.

1. «Էկո-Գրուպ Ինթերնեշնլ» ՍՊԸ-ն ներկայում գործունեություն ծավալո՞ւմ է այս ուղղությամբ:
2. Հաշվի առնելով Նաիրիտի շուրջ ընթացող նոր զարգացումները, խնդրում ենք պարզաբանել, արդյո՞ք Համաշխարհային բանկի հետ կնքված համաձայնագրի շրջանակներում «Էկո-Գրուպ Ինթերնեշնլ» ՍՊԸ-ի անժամկետ տրամադրված լիցենզիան ԲՓ-0031-21 եզրակացությունն ուժի մեջ կմնան, և ընկերությունը կշարունակ՞ի իր գործունեությունը նոր իրավիճակում:
3. Ի՞նչ քաղաքացիաիրավական փաստաթղթի հիման վրա է «Էկո-Գրուպ Ինթերնեշնլ» ՍՊԸ-ն մատուցում/մատուցելու թափոնների այրման ծառայություններ, և ո՞ր կողմերն են ստորագրել այս փաստաթուղթը:

P.S.
Նմանատիպ հարցադրումներով «Էկոլուր»-ը դիմել է նոյեմբերի 26-ին հարցում էր ուղարկել Ներքին գործերի նախարարություն, որտեղից 04.12.2025թ. թիվ 44/95/2/337523-25 պատասխան նամակով հայտնել են, որ աշխատանքների ընթացքի վերաբերյալ անհրաժեշտ է դիմել Շրջակա միջավայրի նախարարություն: Նամակները կցվում են:

Հարգանքով՝

Ինգա Զարաֆյան՝

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի նախագահ,

կենսաբանական գիտությունների թեկնածու

09.12.2025թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
REPUBLIC OF ARMENIA
SECRETARY GENERAL OF MINISTRY OF ENVIRONMENT
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ГЕНЕРАЛЬНЫЙ СЕКРЕТАРЬ МИНИСТЕРСТВА ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЫ

№ 5/26.18/14061
«_____» «_____» 2025թ.

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի նախագահ
տիկին Ինգա Զարաֆյանին

Հարգելի տիկին Զարաֆյան

Ի պատասխան Ձեր 2025 թվականի դեկտեմբերի 9-ի հարցման՝ տեղեկացնում եմ.

1. «Էկո-Գրուպ Ինտերնեյշնլ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կողմից Նաիրիտ գործարանի տարածքում որևէ գործունեություն ներկայումս չի իրականացվում,

2. շրջակա միջավայրի նախարարության կողմից 2021 թվականի դեկտեմբերի 12-ին Ընկերությանը տրամադրվել է № 0017-21 վտանգավոր թափոնների գործածության գործունեության անժամկետ լիցենզիան: Վերջինս գործող է, քանի որ առկա չեն «Լիցենզավորման մասին» օրենքով սահմանված լիցենզիայի կասեցման կամ դադարեցման հիմքեր:

Շրջակա միջավայրի նախարարության կողմից 2021 թվականի փետրվարի 12-ին Ընկերության Նաիրիտ գործարանի արտադրական տարածքում քիմիական նյութերի և վտանգավոր թափոնների ջերմային վնասազերծման կայանքի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրամադրվել է ԲՓ 0031-21 պետական փորձաքննական դրական եզրակացությունը: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 20-րդ հոդվածի 7-րդ մասի՝ փորձաքննական եզրակացությունը կորցնում է ուժը, եթե նախատեսվող գործունեության իրականացումը չի սկսվում փորձաքննական եզրակացության տրվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում,

3. թափոնների այրման ծառայությունների մատուցման քաղաքացիաիրավական փաստաթղթի և վերջինս ստորագրող կողմերի վերաբերյալ շրջակա միջավայրի նախարարությունում տեղեկատվություն առկա չէ:

12/18/2025

X

ՍԵՐԳՈ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Հարգանքով՝ Signed by: ATANESYAN SERGO 4007880425 Սերգո Աթանեսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ,
Մարիամ Բոխյան 011 22-02-24
Շրջակա միջավայրի նախարարության թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման վարչություն,
Շահանդուխտ Մաղոյան 011 81-85-31
Վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության վարչություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
0010, ք.Երևան, Հանրապետության հր., Կառավարական տուն 3
3 Government Bld., Republic Sq., Yerevan, Armenia, 0010
0010, Армения, г.Ереван, Пл. Республики, Дом Правительства 3
✉ 1001060@ke-ctzan.am | minenv@env.am | www.env.am
☎ +374 11 818 520 | 🖷 +374 11 818 506

"Ecolur" Informational NGO Address: 49/2 Hanrapetutyan, Yerevan, Armenia E-mail: ecolurpressclub@gmail.com Web site: www.ecolur.org Tel. (37491) 92 12 64 mob.	ECOLUR NEW INFORMATIONAL POLICY IN ECOLOGY	«ԷԿՈԼՈՒՐ» տեղեկատվական ՀԿ Հասցե՝ Հանրապետության 49/2, Երևան, Հայաստան Էլ. հասցե՝ ecolurpressclub@gmail.com Էլ. կայք՝ www.ecolur.org Բջջ.՝ (+37491) 92 12 64

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
պարոն Դավիթ Խուդաթյանին

Հարցում

Հարգելի պարոն նախարար,
ՀՀ կառավարությունը 2025 թվականի օգոստոսի 28-ին հաստատել է «Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի միջև «Նաիրիտ» գործարանի բնապահպանական վերականգնման և ռեգեներացիայի ծրագրի նախապատրաստման համար դրամաշնորհի նամակ-համաձայնագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրի նախագծի մասին» N 1200-Ա որոշումը, որով նախատեսվում է ապամոնտաժել գործարանը և հողը մաքրել քիմիական նյութերից: Սույն համաձայնագրին ՀՀ նախագահը հավանություն է տվել 2025թ. սեպտեմբերի 1-ի ՆՀ-217 հրամանագրով:

«Էկոլուր» տեղեկատվական ՀԿ-ն իրականացնում է «Բարձրացնել Համաշխարհային բանկի, Հայաստանի Հանրապետության կառավարության և Երևանի քաղաքապետարանի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը՝ կապված Նաիրիտի տարածքի նպատակային վերափոխման որոշման հետ» ծրագիրը, որի հիմնական նպատակը «Նաիրիտ» գործարանի բնապահպանական վերականգնման և ռեգեներացիայի ծրագրի վերբերյալ հասարակության մեջ այդ գործընթացի իրազեկվածության և թափանցիկության բարձրացման ապահովումն է:

2025 թվականի սեպտեմբերին Համաշխարհային բանկի երևանյան գրասենյակի հրավերով տեղի է ունեցել հանդիպում բանկի փորձագետների ու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միջև: Այդ հանդիպմանը հրավիրված էր և մասնակցում էր նաև «Էկոլուր» տեղեկատվական ՀԿ-ն: Քննարկման ժամանակ բարձրացված որոշ հարցերի պատասխաններ օբյեկտիվ պատճառներով, մնացին անորոշ և ոչ-հստակ:

Հայտնի է նաև, որ 2021 թվականի փետրվարի 12-ին «Էկո-Գրուպ Ինթերնեշնլ» ՍՊԸ-ն ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունից ստացել է ՇՄԱԳ-ի դրական եզրակացություն (ԲՓ-0031-21)՝ «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ին պատկանող 33 տեսակի վտանգավոր քիմիական թափոնների (բացառությամբ 1,223,027.0 կգ

էթինոլ սպիրտի) այրման համար: Աշխատանքները նախատեսվում էր իրականացնել «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ի արտադրական հրապարակում՝ 830 քմ² մակերեսով նախկին պոմպակայանի շենքում:

Ելնելով վերոգրյալից և առաջնորդվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով՝ խնդրում ենք տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին.

1. Ո՞ր փուլում է գտնվում «Նաիրիտ» գործարանի բնապահպանական վերականգնման և ռեգեներացիայի ծրագիրը:
2. Ճշգրտվա՞ծ են արդյոք «Նաիրիտ» գործարանի ապամոնտաժումից և քիմիական վտանգավոր նյութերից հողի ու ստորերկրյա ջրերի մաքրումից հետո տարածքի նպատակային օգտագործման թիրախները:
3. Ո՞րն է գործարանի ենթակառուցվածքների ապամոնտաժումից առաջացած և քիմիական ներգործության ենթարկված մետաղական թափոնների վնասազերծման կամ օգտահանման խնդրի լուծման տեսլականը:
4. Նախարարության կողմից նախատեսվո՞ւմ է արդյոք այս գործընթացի իրականացման հայեցակարգի և գործողությունների պլանի ընդունում:
5. Արդյո՞ք «Էկո-Գրուպ Ինթերնեշնլ» ՍՊԸ-ի կողմից նախատեսված «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ին պատկանող 33 տեսակի վտանգավոր քիմիական թափոնների (բացառությամբ 1,223,027.0 կգ էթինոլ սպիրտի) այրման գործընթացը նախատեսվում է ներառել «Նաիրիտ» գործարանի բնապահպանական վերականգնման և ռեգեներացիայի ծրագրում:

P.S.
Նմանատիպ հարցադրումներով «ԷկոԼուր»-ը դիմել է նոյեմբերի 26-ին հարցում էր ուղարկել Ներքին գործերի նախարարություն, որտեղից 04.12.2025թ. թիվ 44/95/2/337523-25 պատասխան նամակով հայտնել են, որ աշխատանքների ընթացքի վերաբերյալ անհրաժեշտ է դիմել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: Նամակները կցվում են:

Հարգանքով՝

Ինգա Զարաֆյան՝

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի նախագահ,

կենսաբանական գիտությունների թեկնածու

09.12.2025թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 3

№ ԱՍ//43112-2025

15.12.25

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի
նախագահ Ինգա Զարաֆյանին
Հեռ.՝ +374 91 92 12 64
Էլ. հասցե՝ ecolurpressclub@gmail.com

Ի պատասխան Ձեր 09.12.2025թ. հարցման

Հարգելի՛ Ինգա Զարաֆյան

Կից նյութով Ձեզ ենք տրամադրում «Նաիրիտ Գործարան» ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարչի կողմից տրամադրված տեղեկատվությունը:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

15.12.2025

X

ԱՐՄԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

Հարգանքով՝ Подписано: SIMONYAN ARMEN 4003890647 Ա. Սիմոնյան

ՄՈՒՐԱԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԿԱՌԱՎԱՐԻՉ

ք. Երևան,Շիրազի 50/10, Լիցենզիաթիվ 2012102-00063, հեռ. / 094/ 45 20 22

<< 11>>դեկտեմբերի 2025թ

ՀՀ Տարածքային կառավարման
և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ
պարոն Ա.Սիմոնյանին
ք. Երևան Կառավարական տուն 3

Հարգելի պարոն Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 09.12.2025թ.-ի թիվ ԱՍ/27.3/42477-2025 գրության, կապված <<Էկոլուր>> տեղեկատվական ՀԿ-ի կողմից հարցմամբ պահանջվող տեղեկատվության տրամադրմանը հայտնում եմ, որ Համաշխարհային բանկի ներկայացուցիչները ա/թ-ի հոկտեմբերի 3-ին այցելել են <<Նաիրիտ Գործարան>>ՓԲ ընկերություն , վերջիններիս կողմից տեղեկացվել է 1,5 մլն ԱՄՆ դոլար դրամաշնորհի շրջանակներում իրականացվելիք աշխատանքների մասին, մասնավորապես նշվել է, որ իրականացվելու է <<Նաիրիտ Գործարան>>ՓԲ ընկերությունում առկա քիմիական նյութերի, հողի նմուշառում, իրականացվելու է մանրամասն ուսումնասիրություն, որը տևելու է 14 ամիս:

Բացի վերը ասվածից <<Նաիրիտ Գործարան>>ՓԲ ընկերությունը այլ տեղեկատվության չի տիրապետում:

Հարգանքով՝

«Նաիրիտ Գործարան» ՓԲԸ-ի
Մնանկության գործով կառավարիչ Մ.Պետրոսյան

"Ecolur" Informational NGO Address: 49/2 Hanrapetutyan, Yerevan, Armenia E-mail: ecolurpressclub@gmail.com Web site: www.ecolur.org Tel. (37491) 92 12 64 mob.	ECOLUR NEW INFORMATIONAL POLICY IN ECOLOGY	«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ Հասցե՝ Հանրապետության 49/2, Երևան, Հայաստան Էլ. հասցե՝ ecolurpressclub@gmail.com Էլ. կայք՝ www.ecolur.org Բջջ.՝ (+37491) 92 12 64

ՀՀ ներքին գործերի նախարար տիկին Արփինե Սարգսյանին
«Էկոլուր» տեղեկատվական ՀԿ-ի
նախագահ Ինգա Զարաֆյանից

Հարցում

Հարգելի տիկին նախարար,
2025թ. օգոստոսի 28-ին ՀՀ կառավարությունը թիվ 1200-Ա որոշմամբ հաստատել է «ՀՀ և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Նաիրիտ գործարանի շրջակա միջավայրի վերականգնման և ռեգեներացիայի ծրագրի նախապատրաստման համար» դրամաշնորհային համաձայնագիրը», որը նախատեսում է գործարանի ապամոնտաժում և տարածքի մաքրում քիմիական նյութերից: ՀՀ նախագահը հաստատել է այս համաձայնագիրը 2025թ. սեպտեմբերի 1-ի թիվ ՆՀ-217 հրամանագրով:

Հայտնի է նաև, որ 2021 թվականի փետրվարի 12-ին «Էկո-Գրուպ Ինթերնեշնլ» ՍՊԸ-ն ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունից ստացել է ՇՄԱԳ-ի դրական եզրակացություն (ԲՓ-0031-21)՝ «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ին պատկանող 33 տեսակի վտանգավոր քիմիական թափոնների (բացառությամբ 1,223,027.0 կգ էթինոլ սպիրտի) այրման համար: Աշխատանքները նախատեսվում էր իրականացնել «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ի արտադրական հրապարակում՝ 830 քմ^2 մակերեսով նախկին պոմպակայանի շենքում:

«Էկոլուր» տեղեկատվական ՀԿ-ն իրականացնում է «Բարձրացնել Համաշխարհային բանկի, Հայաստանի Հանրապետության կառավարության և Երևանի քաղաքապետարանի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը՝ կապված Նաիրիտի տարածքի նպատակային վերափոխման որոշման հետ» ծրագիրը, որի հիմնական նպատակը «Նաիրիտ» գործարանի բնապահպանական վերականգնման և ռեգեներացիայի ծրագրի վերբերյալ հասարակության մեջ այդ գործընթացի իրազեկվածության և թափանցիկության բարձրացման ապահովումն է: Ելնելով վերոգրյալից և առաջնորդվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով՝ խնդրում ենք տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին.

1. Ի՞նչ քաղաքացիաիրավական փաստաթղթի հիման վրա է «Էկո-Գրուպ Ինթերնեշնլ» ՍՊԸ-ն մատուցում/մատուցելու թափոնների այրման ծառայություններ, և ո՞ր կողմերն են ստորագրել այս փաստաթուղթը: Ի՞նչ փուլում են նախատեսվող աշխատանքները, և վնասազերծված վտանգավոր թափոնների ծավալները:
2. Խնդրում ենք տրամադրել «Էկո-Գրուպ Ինթերնեշնլ» ՍՊԸ-ի աշխատանքային պլանը և ժամանակացույցը, ինչպես նաև կատարված աշխատանքների հավաստիացնող փաստաթղթերը:
3. Հաշվի առնելով Նաիրիտի շուրջ ընթացող նոր զարգացումները, խնդրում ենք պարզաբանել, արդյո՞ք Համաշխարհային բանկի հետ կնքված համաձայնագրի շրջանակներում «Էկո-Գրուպ Ինթերնեշնլ» ՍՊԸ-ի անժամկետ տրամադրված լիցենզիան ուժի մեջ կմնա, և ընկերությունը կշարունակ՞կի իր գործունեությունը նոր իրավիճակում: Արդյո՞ք կօգտագործվի «Էկո-Գրուպ Ինթերնեշնլ» ՍՊԸ-ին Շրջակա միջավայրի նախարարության կողմից տրամադրված «Նաիրիտ» գործարանի արտադրական տարածքում քիմիական նյութերի և վտանգավոր թափոնների ջերմային վնասազերծման կայանքի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն» դրական եզրակացությունը:

Հարգանքով՝

Ինգա Զարաֆյան՝

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի նախագահ,

կենսաբանական գիտությունների թեկնածու

26.11.2025թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ
ՆՎԱԶԵՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

№ 44/95/2/337523-25 «04» 12 2025թ.

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի նախագահ
Ինգա Զարաֆյանին
(Էլ. հասցե՝ ecolurpressclub@gmail.com)

Ի պատասխան Ձեր 2025 թվականի նոյեմբերի 26-ի հարցման

Հարգելի՛ տիկին Զարաֆյան

Հայտնում եմ, որ Համաշխարհային բանկի կողմից ՀՀ կառավարություն է ներկայացվել՝ «Նաիրիտ գործարան» ՓԲ ընկերության տարածքի շրջակա միջավայրի բարելավման նպատակով ներդրումային/ դրամաշնորհային ծրագիրը, որն արժանացել է ՀՀ կառավարության հավանությանը և ներկայումս ընթանում են աշխատանքային քննարկումներ ծրագրով նախատեսված միջոցառումներն իրականացնելու ուղղությամբ (աշխատանքների ընթացքի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն ստանալու նպատակով անհրաժեշտ է դիմել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն):

«Էկո-Գրուպ Ինթերնեշնլ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) լիազոր մարմնի կողմից «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ի տարածքում առկա վտանգավոր քիմիական նյութերի այրման, վնասազերծման, չեզոքացման աշխատանքների ՇՄԱԳ փորձաքննության նպատակով տրված դրական եզրակացության, վտանգավոր քիմիական

0054, Երևան, Դավթաշեն 4, Ա. Միկոյան փող. 109/8 Հեռ.՝ (+374 12) 31 78 15

նյութերի վնասազերծման, այրման, չեզոքացման ոլորտում անժամկետ հատկացված գործունեության լիցենզիայի և այլ հարցերի վերաբերյալ սպառիչ տեղեկատվություն ստանալու նպատակով առաջարկում եմ դիմել ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը:

Հարգանքով՝

փ/ծ գնդապետ ***Գուրգեն Մարտիրոսյան***

Կատարող՝ ՀՀ ՆԳՆ, ՓԾ ԲՊՄՌՆ վարչություն
հրահանգիչ Անահիտ Գալստյան
Հեռ.՝ 012 -31-78-73